

ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐԵՐԵՆԻ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ
ԱՌԱՋՆԹԱՑԻ ՄԵԶ
ՀԱՄՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հայատառ թուրքերեն գրականության առաջին նմուշները պատկանում են 14-րդ դարին՝ Օսմանյան կայսրության հաստատման առաջին իսկ շրջանին: Այս գրականության առաջացումն արդյունք էր օսմանյան տիրապետության տակ գտնվող արևմտահայության սոցիալական, հասարակական-քաղաքական անասելի ծանր իրավիճակի: Բռնի մահմեդականացման, թուրքացման քաղաքականության արդյունք է հանդիսացել Արևելյան վիլայեթներում իրենց պատմական հողերի վրա ապրող ավելի քան կես միլիոն հայերի թրքախոս դառնալը: Լեզուն կտրելու, մահվան սպառնալիքով արգելված է եղել խոսել հայերեն: Քարոզն անգամ եկեղեցիներում թուրքերեն է հնչել: Ինչպես հայտնի է՝ այդ շրջանում Օսմանյան կայսրությունում մի քանի տասնյակ տեսակի տուրքերի տակ կրված հայ ժողովուրդը ոչ միայն տնտեսապես ծայրահեղ հյուծված էր, այլև բարոյական, հոգեբանական անմարդկային նվաստացումների էր ենթարկվում: Դրա արտահայտություններից էին աղջկահավաքները՝ հարեմների համար, տղայահավաքները, մանկահավաքները (դեշիրմե)՝ ենիչերական սարսափագրու հրոսակախմբերի համար, ուր քրիստոնյա երեխաները դաստիարակվելով մահմեդական ծայրահեղության մթնոլորտում՝ օգտագործվել են իրենց ծնող ժողովուրդների դեմ: Սակայն առերես մահմեդականություն ընդունելով, նրանք հիմնականում հավատարիմ են մնացել իրենց կրոնին, ազգային ավանդույթներին, գյուղերում գաղտնի հայ քահանաներ են հրավիրել, գաղտնի մկրտություններ, պսակադրություններ կատարել: Ահա մեր ժողովրդի թուրքախոս այս հատվածի համար է ծնունդ առել հայատառ թուրքերենը՝ որպես արևմտահայության ինքնապահպանման ու ուժացման դեմ պայքարի միջոց, հաղորդակցման միջոց ոչ միայն հայերեն չիմացողների, թրքալեզու դարձածների, այլ նաև մասամբ՝ հայերենին տիրապետողների համար:

Որպես մշակույթի մի հզոր, բազմաժանր ու ինքնուրույն ճյուղ, հայատառ թուրքերենի իրողությունը ոչ միայն արդա-

րացրել է արևմտահայությանը ծառայելու իր առաքելությունը, այլև վերաճել է ավելի լայն գործունի: Նա ծառայել է նաև Օսմանյան կայսրության թուրքալեզու ժողովուրդներին, առավելապես՝ թուրք ժողովրդին, իր մեծագույն ներդրումն ունենալով նրանց զարգացման, լուսավորության գործում:

Հայատառ թուրքերենի տպագիր շրջանն ընդարձակ աշխարհագրություն ունի: Այդ միջոցով բազմաթիվ գրքեր են հրատարակվել աշխարհի մոտ 50 քաղաքների 200-ից ավելի տպարաններում: Միայն Կ. Պոլսում սոցիալ-քաղաքական, կրոնական, գրական թեմատիկայով, լուսավորական նպատակներ հետապնդող այդ գրքերը տպագրվել են մոտ 85 տպարաններում: Ավելի քան 250 տարիների ընթացքում տպագրված հայատառ թուրքերեն գրքերի թիվն անցնում է 2500-ից: Հավելենք այս ամենին թատրոնի համար կատարված 500-ից ավել թարգմանությունները, փոխադրությունները: Դրանց մի աննշան մասն է միայն տպագրվել, սակայն այս հանգամանքը դույզն իսկ չի նսեմացնում նրա ունեցած կրթական, լուսավորական, մշակութային առեւելի նշանակությունը: Հայատառ թուրքերեն մամուլը կազմում է մոտ 130 ամուսն պարբերական, որոնք հրատարակվել են 1840-1947թթ. ընկած ժամանակաշրջանում:¹

Ահա հայատառ թուրքերենի սեղմ ուրվագիծը:

Ի դեպ՝ վերջին տարիներին Թուրքիայում հայ գիտնականների կողմից լույս աշխարհ են գալիս հանրագիտարանային արժեքի շքեղ հրատարակություններ, նվիրված Օսմանյան կայսրության տարբեր ասպարեզներում հայերի ունեցած ներդրմանն ու դերին: Հայտնի են Բարսեղ Թուրքլաճիի (Բարսեղ Թուրլաճեան) հրաշալի մեմագրություն-ալբոմները պալատական ճարտարապետներ Պալյան գերդաստանի², երաժշտական գործիքների, կղզիների, հայտնի գերդաստանների մասին և վերջապես՝ 2005-ին հրատարակված կոթողային հայկական եռահատոր հանրագիտարանը:

Մինչ այդ՝ հայտնի էր հայագի կաթոլիկ գիտնական Չարքի գիրքը (1953թ.)³, որը հայագի երևելի անձանց ունեցած դերի մասին է Օսմանյան կայսրության մեջ: Այն ավելի պետական, ռազմական կառավարման ոլորտի մասին է: Այս մասին է Հրաչյա Աճառյանի մի հոդվածը:⁴

Մյուս գիտնականը Կարո Զյուրքմենն է՝ իր արծաթագործությանը, Անատոլիայի, Օսմանցիների կշռի ու չափի գործիքների, կայսրության հայ նկարիչների, պղնձագործության, Կուտինայի ճենապակու մասին տպագրած ու տպագրվելիք ծավալուն աշխատություններով:⁵

Արսեն Յարմանի՝ Օսմանյան կայսրության առողջապահության մեջ հայերի նպաստի, Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցի մասին աշխատությանը առաջին անգամ բարձր մակարդակով, փաստագրական հարուստ նյութի հիման վրա ժամանակակից թուրքերենով ներկայացվել է հայ ժողովրդի պատմությունը, սկսած ուրարտական շրջանից մինչ օրս:⁶

Հայ և թուրք հրատարակիչների կողմից պոլսահայ հայտնի բանասեր Գ. Բամպուկչյանի թուրքերեն գործերի քառահատորյակի հետմահու հրատարակությունը կարևոր ներդրում է հայատառ թուրքերենով գրականության ուսումնասիրության համար:⁷ Մեզ հետաքրքրող նյութի առնչությամբ այն պարունակում է բազմաթիվ կարևոր վկայություններ հայ երևելի տոհմների, ամիրայական գերդաստանների մասին, որոնք սերնդե սերունդ

իրենց ձեռքում են պահել մի շարք պալատական պաշտոններ՝ ճարտարապետների, փողերանոցի, վառողարանի, ժամագործների, նկարիչների, ոսկերիչների ու արծաթագործների, ակնագործների և այլն:

Ամիրայական ընտանիքները մեծ համարում են ունեցել պալատում, դիվանագիտական շրջանակներում, արևմտահայ մթնոլորտում: Նրանց մի մասը, հարելով կաթոլիկ եկեղեցուն, այնուամենայնիվ զգալով եկեղեցու մասնատվածության վտանգը հայապահպանության համար՝ միավորվել են տարբեր միություններում, այսպարել հանուն միաձույլ ազգի ապագայի. նրա զարթոնքի: Այս ընտանիքներն ասեք մրցել են միմյանց հետ՝ ո՞վ ավելի շատ, ավելի լավ կօգնի իր ազգին, իր ժողովրդին: Ու կառուցվել են եկեղեցիներ, դպրոցներ, որքանոցներ ու ծերանոցներ, հիվանդանոցներ ու հիմարանոցներ, հիմնվել են տպարաններ, հրատարակել պարբերականներ: Բարեբախտաբար Պոլսո պատրիարքական աթոռը հիմնականում դրական դեր է խաղացել ու գլխավորել է այս շարժումը:

Հայ Պոլիսը հիմնականում կազմված է եղել հայ արհեստավորներից: Պոլսահայ բանասեր Հարություն Մրմրյանն իր «Թուրքահայոց հին վաճառականությունը և վաճառականները» գրքում բերում է 65 էսնաֆների (արհեստագործների) մի ցուցակ: Սա պատկերացում պիտի տա տարբեր ոլորտներում զբաղվածության, ավելի ճիշտ՝ այս-ասպարեզներն իրենց ձեռքերում կենտրոնացրած հայ բնակչության մասին:⁶

Ահա այս առումով չափազանց կարևորվում են հայատառ թուրքերենով հրատարակություններում առկա սկզբնաղբյուրների վկայությունները: Բայց ոչ միայն այդ:

Մեզ հետաքրքրող բնագավառը՝ թուրքերեն լեզվի, գրականության, տպագրության, պարբերական մամուլի, թատրոնի ասպարեզն է՝ կայսրության ժողովուրդների մշակույթի ու կենցաղի անհրաժեշտ դարձած մասը:

Բնականաբար պոլսահայությունը ևս մյուս ազգերի, նույնիսկ միմյանց հետ, թուրքերենով է հաղորդակցվել: Ցավոք՝ կաթոլիկությանը հարած որոշ հայ ընտանիքներում սկզբունքորեն հայերեն չեն խոսել: Ֆրանսերենը, թուրքերենն են գերիշխել այդտեղ, մասնավորապես՝ հայատառ թուրքերենը:

Հայատառ թուրքերենով տպագրությունը, և՛ գրքերի և՛ պարբերական մամուլի առումով հիմնականում կատարվում էր Կ. Պոլսում:⁷

Շնորհիվ արևմտյան լրագրողական մշակույթի արտահայտությունը լինելու հանգամանքին, իր ժամանակին համահնչյուն, նոր ու հարուստ ինքնուրույն ու թարգմանական նյութեր ներկայացնելու շնորհիվ հայատառ թուրքերեն պարբերական մամուլը դարձավ կայսրության ամենակարդացվող մամուլը:

Ունենալով սոցիալ-քաղաքական տարբեր սկզբունքներ, համոզմունքներ ու համակրություններ, հրատարակվելով կրոնական տարբեր համայնքների կողմից (առաքելական, կաթոլիկ, բողոքական) մամուլը օր օրի արտացոլել է արևմտահայության կյանքի բոլոր կողմերը, իրավիճակը: Հայատառ թուրքերեն մի շարք պարբերականներ բազմաթիվ բաժանորդներ, թղթակիցներ են ունեցել կայսրության տարբեր շրջաններում, արտասահմանում՝ ապահովելով կարևոր և հետաքրքիր նյութեր իրենց ընթերցող-

ների համար: Ժամանակի եվրոպական, մասնավորապես ֆրանսիական մամուլի օրինակով, հայատառ թուրքերեն պարբերականներն իրենց էջերում տպագրել են երկրի ներքին, արտաքին, ազգային հարցերին վերաբերող նյութեր: «Կրոնական», «առևտրական», «ուսումնական», «մոլորություններ», «գրքեր», «թատրոն», «հայտարարություններ» և այլ ենթախորագրերի տակ հրատարակել են ամենատարբեր նյութեր: Հայատառ թուրքերեն պարբերականների էջերում՝ մույսպես ֆրանսիական թերթերի օրինակով, թարգմանվել և տպագրվել են ժամանակի հայտնի գրական գործերը: Այս պարբերականների հեղինակությունն այնքան մեծ է եղել, որ ոչ միայն աշխատակցել, այլև բաժանորդագրվել են թուրքերենին տիրապետող այլազգի անձինք, բնականորեն նաև առաջին հերթին՝ թուրքեր, դրանք նախընտրելով օսմաներեն պարբերականներից, ուր արտասահմանյան լուրերը ոչ թե հաջորդ օրն էին մատուցվում, այլ՝ շաբաթներ անց միայն:

Հայատառ թուրքերեն հրատարակությունները վերաբերել են կայսրության կյանքի բոլոր կողմերին: Այն համընդհանուր օգտագործման, անհրաժեշտության առարկա է եղել: Բոլոր արհեստագործական, և այլ ամենատարբեր միությունները, ընկերությունները, որոնք ունեցել են կանոնադրություններ, դրանք եղել են հայատառ թուրքերենով:

Թվարկենք մի քանի բնագավառ, որոնց առնչվող պաշտոնական փաստաթղթերը և հրատարակությունները շրջանառության մեջ են դրվել հայատառ թուրքերենով:

Պարբերականներ, առանձին գրքեր, եվրոպական լեզուներից թարգմանությունների հրատարակություններ:

Օրենքներ 5 հատորով Օսմանյան կառավարության օրենքների ժողովածու, առանձին առանձին՝ տարբեր կանոնադրություններ, քրեական, քաղաքացիական օրենքներ, կտակի, ժառանգության, նվիրատվության մասին օրենքներ, օրենքների հավաքածուներ՝ շենքերի շինարարության համար, պետական տարբեր դաշնագրերի հրատարակություններ և այլն:

Առևտուր՝ դրանք հաշվեցուցակներ են, կալվածագրեր, Կ. Պոլսի մաքսատան սակագույցներ, առևտրի վերաբերյալ գրքեր, դասագրքեր: (Ի դեպ՝ հայատառ թուրքերեն մի շարք պարբերականներ առևտրական ուղղություն են ունեցել):

Գյուղատնտեսություն՝ այգեգործություն, հողագիտություն, ծաղկաբուծություն, պարտիզպանություն, հավաքուծություն, կենդանաբանություն, շերամապահական տնտեսության տարածման համար հրատարակված բազմաթիվ ուղեցույց գրքեր, 1906թ. հրատարակված գյուղատնտեսական պատկերազարդ պարբերաթերթ:

Այցետոմսեր, ազդագրեր, ֆոտո նկարների ավրոմներ, տարեցույցներ, ճանապարհորդական նոթեր-ուղեցույցներ, աշխարհագրության, աստղագիտության, միկրոբիոլոգիայի, հանքերի, մետաղամշակման մասին գրքեր:

Ամենօրյա կենցաղին անհրաժեշտ խոհարարական գրքեր՝ եվրոպական, արևելյան խոհանոցների բազմազանությամբ, երազահաններ, գուշակության գրքեր, օգտակար խորհուրդներ, երգարաններ...

Շատ պարբերականներ ունեցել են մասնագիտական որոշակի

ուղղվածություն: Այսպես օրինակ հրատարակվել են գիտությանը, գիտական տեղեկատվությանը, տեխնիկական, բանկային, առևտրական, արդյունաբերական, ուսման, առողջապահական, երիտասարդների սեռական դաստիարակությանը նվիրված, նորաձևության մասին շաբաթաթերթեր, ամսագրեր, օրաթերթեր:

Հայատառ թուրքերեն լեզվով ստեղծվել է բովանդակային առումով բազմազան և ծավալուն ուսումնական գրականություն: Թուրքերեն լեզվի ձևավորման ու զարգացման համար առատորեն տպագրվող հայ լեզվաբանների հեղինակած օսմաներենի դասագրքերը, բառարանները, գրուցարաններն ուղեմշային են եղել: Այսպես է ձևավորվել ժամանակակից թուրքերենը:

Հայատառ թուրքերեն թարգմանական գեղարվեստական գրականությունն անմխաղես ճանաչում էր վայելում: Ֆրանսիայում տպագրված գրականությունը մեկ, երկու ամիս անց արդեն հայատառ թուրքերենով կարդացվում էր ողջ Օսմանյան կայսրությունով մեկ՝ թեյաբաններից սկսած մինչև պալատ ու հարեմ: Այս գրականության ծանրակշիռ մի մասը ծառայեց նաև հայկական թատերախմբերին, ապա նաև՝ թուրք թատրոնի ստեղծմանը: Հայկական թատերախմբերի թուրքերենով ներկայացումները ողջ երկրով մեկ ունեցան հեղափոխական նշանակություն: Թուրքիայի նման բռնատիրական, ֆեոդալական ավանդույթներով ապրող երկրում, որի բնակչության մեծագույն մասն անգրագետ էր, սա եվրոպականացման լավագույն միջոցներից մեկը համդիսացավ: Թատրոնը՝ բեմի մյուս կողմում նստողների համար փոխարինեց այն ամենին, ինչը պիտի հաղորդակից դարձներ նրանց աշխարհի հին ու նոր դեպքերին, դեմքերին, տարբեր ժամանակների մարդկանց, կրոններին, սովորություններին ու պատմություններին: Թատրոնը կյանքի, կենցաղի, առանձին ճակատագրերի օրինակով համդիսատեսին մղում էր սեփականի շուրջ դատողություններ անելուն, ժամանակի շունչը զգալուն:

Ինչ վերաբերում է հայատառ թուրքերեն թարգմանական գրականությանը, ապա նկատենք, որ հայ թարգմանիչներն օգտագործում էին բոլոր հնարավորությունները, որպեսզի այդ տարիներին հրատարակվող վեպերը ոչ միայն իրենցից ընթերցանության հաճելի ու հետաքրքիր նյութ ներկայացնեն, այլ հասարակությանը օգտակար լինեն: Թարգմանիչների բանակի մեծ մասը ժամանակի ամենազարգացած անձերից են եղել: Նրանք լավ ծանոթ են եղել ֆրանսիական հարուստ գրականությանը և մշակույթին, եվրոպական գաղափարախոսությանը: Այս թարգմանիչները տիրապետել են մի քանի լեզուների: Եզակի երևույթ չի եղել, երբ մույն անձը մույնպիսի վարպետությամբ թարգմանություններ է կատարել իտալերենից, ֆրանսերենից և այլ լեզուներից: Համոզված կարելի է ասել, որ հայատառ թուրքերեն թարգմանական հսկա գրականությունը, որ մուտք է գործել թուրքական և թրքախոս հայերի շրջանակ՝ կոչված էր ծառայելու նրանց ընդհանուր մտավոր զարգացմանը, նոր աշխարհայացքի ձևավորմանը: Թարգմանությունների ընտրության նպատակները հեռահայաց են եղել: Հրատարակիչները հիմնականում ձգտել են հատընտիր, հաճելի և օգտակար գրքերի շնորհիվ սեր և ճաշակ զարգացնել մտավոր ու հոգևոր ար-

ժեքների նկատմամբ, սովորեցնել ընթերցողներին դրանք վեր դասել առօրյա կենցաղից, զարգացնել ընթերցողների մտավոր հնարավորությունները և հոգեկան սնունդ տալ նրանց, մղել դեպի ընթերցանություն: Հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումների համար թուրք երիտասարդ մտավորականությունը, որի մի մասը կրթություն էր ստացել եվրոպական երկրներում՝ հայ դերասանապետների կողմից թարգմանությունների, փոխադրությունների, ինքնուրույն պիեսների առատ պատվերներ էին ստանում: Թուրք նոր գրականության ներկայացուցիչների համարյա բոլոր ինքնուրույն գործերի ստեղծումը պայմանավորված է եղել նրանց ու հայկական թատերախմբերի համագործակցությամբ: Նրանց պիեսները խաղացվել են հայկական բեմում, նրանք հայտնի են դարձել շնորհիվ դրա:¹⁰ Թատրոնը ծնունդ տվեց թուրք նոր գրականության, թուրք լուսավորիչների, գրական նոր թուրքերեն լեզվի, թուրքական լրագրողական մշակույթի կազմավորմանը: Հարկ է նշել նաև, որ թուրք գրողներին մեծապես օգնում էր այն հանգամանքը, որ երբեմն պատվիրված երկն արդեն թարգմանված և տպագրված էր լինում հայերի կողմից հայատառ թուրքերենով: Մնում էր միայն կրճատումներ կատարել և վերածել պիեսների:

Ցանկանում ենք անդրադառնալ հարցի մի այլ կողմին՝ թարգմանությունների լեզվական առանձնահատկություններին: Նշենք, որ ոչ բոլոր հայատառ թուրքերեն թարգմանությունների լեզուն եղել է նույնը: Կան գրքեր, որոնք այսօր ժամանակակից ընթերցողը դժվարությամբ կկարդա: Այդպիսի հրատարակությունների թիվը մեծ չէ: Մինչդեռ թուրք լուսավորիչների կատարած՝ եվրոպական երկերի թարգմանությունները կարդալու համար այսօր դրանք տպագրվում են՝ «թարգմանվելով» ժամանակակից թուրքերենի: Այնպես որ, եթե ժամանակին կայսրության ժողովուրդը ծանոթացել է եվրոպական գրականությանը՝ ապա միայն հայատառ թուրքերեն գրքերի ու հայկական թատերախմբերի թուրքերեն ներկայացումների շնորհիվ: Այս ներկայացումները թատրոն են բերել ժողովրդի լայն խավերին, իսկ որ ամենակարևորն է՝ թուրք կնոջը, հարեմի կնոջը: Բեմում կինը բոլորովին այլ էր, ուրը մտածելու, պայքարելու, ազատ լինելու մղում էր պարտադրում:

Բոլոր դերասաններն իրենց դերերը սովորել են հայատառ թուրքերենով: Հայկական այբուբենը հանդիսացել է, ընդհուպ մինչև Առաջին համաշխարհային պատերազմի տարիները, Թուրքիայում գործող բոլոր թատերախմբերի աշխատանքի անփոխարինելի միջոցը, իսկ հայատառ թուրքերենը՝ թատրոնի աշխատանքային լեզուն:

Թուրքական նոր գրականության գործիչներին ամենից ավելի մտահոգող և նրանց օրակարգային խնդիրներից էր ժամանակի պահանջները բավարարող գրական նոր թուրքերենի ձևավորման հարցը: Չմայած իրենց գործադրած ճիգերին՝ արաբիզմներով, ծեքծեքուն ոճերով հագեցված թուրքերենը հեռու էր գրական նոր լեզու լինելու նախադրյալներից: Թուրքական թատրոնի պատմաբանների կողմից այս շրջանն ուսումնասիրվում է որպես թուրքական ազգային թատրոնի սկզբնավորման ժամանակաշրջան: Իսկ թատրոնի լեզուն, ինչպես և հայատառ թուրքերենի ինքնուրույն ու թարգմանական գրականության լեզուն՝ «կոպիտ թուրքերենի» ու դասական օսմա-

ներենի ոսկյա միջինն էր, հավելված եվրոպական լեզուներից կատարված փոխառություններով, որոնք հիմնականում արտահայտում էին Թուրքիայի համար նոր գաղափարներ, հարաբերություններ, գիտության տարբեր բնագավառները հնարավորինս պարզ ներկայացնելու ջանքեր: Նոր գրական թուրքերենը ձևավորելու պատիվը իսկապես պատկանում է հայատառ թուրքերեն գրականությանը: Իզուր չէ, որ մինչ Առաջին համաշխարհային պատերազմը փորձեր եղան օսմաներենի արաբատառ այբուբենը փոխարինելու մետրոպոլիտանային այբուբենով, որը հրաշալիորեն արտահայտում էր թուրքերենի ողջ հնչյունական կազմը: 1860-ական թթ. Օսմանյան կայսրության Ալի և Ֆուադ փաշաների, մեծ եպարքոսի այս առաջարկությունը պայմանավորված էր հայատառ թուրքերենի մեծ ազդեցությամբ, ինքնաբավ գրականություն լինելու փորձաքննությունն անցած, կայսրության կյանքի բոլոր բնագավառներում առկա լինելու հանգամանքով: Այս շարժումն այնպիսի մի թափ ստացավ, որ հայկական մթնոլորտում դարձավ քննարկման հատուկ նյութ: Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» շաբաթաթերթը հայ գրողներին ու գործիչներին ուղղված մի շրջաբերականում հարցնում է, թե՝ «...հայկական տառերի ընդունումը թուրքերի կողմից օգտակա՞ր, թե վնասակար կարող է լինել հայ գրականության ու լեզվի համար»: 1910 թվականի Հովհաննես Թումանյանի «Հայատառ թուրքերենը» հոդվածում¹¹ կարդում ենք իր խորհրդածություններն այս մասին, որն ավարտվում է հարցի մեջ ոչ մի վնաս չտեսնելու եզրակացությամբ, միաժամանակ զարմանքով, թե ինչու՞ լատինական տառեր չեն որդեգրվում արաբականի փոխարեն:

Մեծ եղեռնին զոհ գնացին հարյուր հազարավոր թուրքախոս հայեր: Նրանց թվում էին նաև հայատառ թուրքերենի մշակները, այդ գրականության կրողները: Ջարդերից մազապուրծ փրկված թուրքախոս հայերի խլակները, որ ապաստանել էին Մերձավոր Արևելքի հարևան երկրներում և Ամերիկայում՝ շարունակեցին հայատառ թուրքերենի հրատարակչական ավանդույթները: Դրանք հիմնականում միսիոներական հրատարակչություններ էին, որոնք ավելի հայապահպան ուղղություն ունեին, և չստեղծվեցին մշակութային մեծ արժեք ունեցող գործեր:

Այսպիսով հայագիր և հայատառ թուրքերեն գրականության, մամուլի զարգացումն Օսմանյան կայսրությունում, նրանց զարթոնքի շրջանի հաջողությունները, որը համընկնում էր կայսրությունում մտավոր ընդհանուր վերելքի շրջանին, լուսավորական մեծ նշանակություն են ունեցել ոչ միայն արևմտահայ մթնոլորտում, այլև հեղափոխական ազդեցություն են թողել թուրքախոս այլ ժողովուրդների վրա՝ նրանց զարգացման, եվրոպական արժեքներին հասու լինելու առումով:

Այս ամենն արտահայտությունն էր այն բանի, որ արևմտահայությունը մի որոշիչ, հուժկու ուժ էր դարձել Օսմանյան կայսրությունում նրա կյանքի համարյա բոլոր բնագավառներում: Այս ուժը թեև իր ողջ մտավոր, տնտեսական, քաղաքական ներուժը ներդրել էր Օսմանյան կայսրությանը ծառայելու, այն զարգացնելու համար, այնուամենայնիվ այն կառավարող շրջանակների և օտար տերությունների կողմից դիտվում էին Օսմանյան կայսրություն ներթափանցելու, այն իրենց երկրների լիարժեք ազդեցու-

թյան գոտի դարձնելու նպատակներին խանգարող ուժ: Այս է պատճառը, որ նրանց համատեղ ծրագրմամբ իրականացվեց մեր ժամանակների մեծագույն ոճիրներից մեկը՝ Մեծ եղեռնը՝ հայերի ցեղասպանությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ¹ Տես՝ Ստեփանյան Յ.Ա. Հայատառ թուրքերեն գրքերի եւ հայատառ թուրքերեն պար-
բերական մամուլի մատենագիտություն, Ստամբուլ, 2005:
- ² Tuđlacý Pars. Osmanlıy Mimarlıđýda Batýlapma Döñemi ve Balyan ailesi, Ýst., 1981, 352 s.
- ³ Çark Y.G. Türk Devleti Hizmetinde Ermeniler 1453-1953. Ýst., 1953, 302 s.
- ⁴ Աճառյան Հրաչյա. Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ. Երևան, 1999:
- ⁵ Garo Kürkmen. Osmanlı İmberatorluđunda Ermeni Ressamlar, Ýst., 2004, 2 cilt, 988s.
Garo Kürkmen. Anadolu Ađýrlýk ve Ölçüleri. Ýst.;
Garo Kürkmen. Gümüş Damgalary, Ýst.;
Garo Kürkmen. Osmanlılarda Ölçü ve Tartilar, Ýst.
- ⁶ Yarm an Arsen. Osmanlı Sađlýk Hizmetlerinde Ermeniler ve Surp Pýrgiç Ermeni Hastanesi Tarihi, Ýst., 2001, 865 s.
- ⁷ Pamukciyan Kevork. Ermeni Kaynaklarýndan Tarihe Katkýlar, Yayıña hazýrlayan Osman Köker. Cilt 1-Ýstanbul yazýlary; Cilt 2-Ermeni Harfli Türkçe Metinler; Cilt 3-Zamanlar, Mekânlar, Ýnsanlar; Cilt 4-Biyografileriyle Ermeniler, Aras Yayýncýlýk. Ýstanbul, 2002-2003, s. 249, 255, 373, 449.
- ⁸ Մյրմբեան Հ. Թուրքահայոց հին վաճառականությունը եւ վաճառականները, Կ. Պոլիս, 1910, 156 էջ:
- ⁹ Այս և հաջորդների մասին տես՝ Ստեփանյան Հասմիկ. Հայատառ թուրքերեն գրականությունը, Երևան, 2001:
- ¹⁰ Metin And. Tanzimat ve Istibdat döneminde Türk Tiyatrosu 1839-1908, Ankara, 1972, 466 s.
- ¹¹ Թումանյանը քննադատ, կազմ. Նվ. Թումանյան, Եր., 1939, էջ 145: Այս մասին տես նաև՝ Աճառյան Հրաչյա. Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1999, էջ 20: